ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՅՎԱԶՅԱՆ ՇՈՒՇԱՆ ԳԱԳԻԿԻ

# ԻՐԱՆԱՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ XX ԴԱՐՈՒՄ

ժէ.00.02 - «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանիհայցման ատենախոսության

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

АЙВАЗЯН ШУШАН ГАГИКОВНА

# ТВОРЧЕСТВО ИРАНО-АРМЯНСКИХ КОМПОЗИТОРОВ XX ВЕКА

## АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
17.00.02 – “Музыкальное искусство”

ЕРЕВАН – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Երնջակյան Լիլիթ Վարդգեսի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ արվեստագիտության դոկտոր
**Ռուխկյան Մարգարիտա Աշոտի**

արվեստագիտության թեկնածու
**Շախկուլյան Տաթևիկ Ռաֆայելի**

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. դեկտեմբերի 25-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. նոյեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Ասատրյան Ա. Գ.**

---

Тема диссертации утверждена в Ереванской государственной консерватории им. Комитаса.

Научный руководитель - доктор искусствоведения, профессор
**Ернджакян Лилит Вардгесовна**

Официальные оппоненты - доктор искусствоведения
**Рухкян Маргарита Ашотовна**

кандидат искусствоведения
**Шахкулян Татевик Рафаеловна**

Ведущая организация – Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна

Защита диссертации состоится 25-го декабря 2017г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 25-го ноября 2017г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

**Асатрян А. Г.**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:**Հարուստ պատմամշակութային ավանդույթներ ունեցող Պարսկահայքը կարևոր դեր է խաղացել Իրանի մշակույթի զարգացման բնագավառում՝ նպաստելով երկու ժողովուրդների մշակույթների փոխներգործությանն ու փոխհարստացմանը:Թեև երկու ժողովուրդների միջև մշակութային դարավոր կապերը գրեթե չեն ընդհատվել, սակայն պատմաքաղաքական և տնտեսական հանգամանքները մշտապես թելադրում են նոր մոտեցումներ, առաջադրում նոր խնդիրներ: Այդ շարքում առանձնակի կարևորություն է ձեռք բերում երաժշտականմշակույթը, մասնավորապես պրոֆեսիոնալ կոմպոզիտորական ստեղծագործությունը:Իրանահայ կոմպոզիտորական արվեստը XX դարում ներկայանում է մի շարք անվանի ստեղծագործողներով, որոնց ձեռքբերումները գնահատվել են թե՛ Իրանում, թե՛ Հայաստանում և թե՛ աշխարհի տարբեր երկրներում: Նիկոլ Գալանդերյանը, Էմմանուել Մելիք-Ասլանյանը, Լևոն և Ռուբեն Գրիգորյանները, Հրանտ Բեկլարյանը, Լյուդվիգ Բազիլը, Ավետիս Ջամբազյանը և այլք կազմում են այն արվեստագետների շարքը, որոնց ներդրումը մեծ է Իրանի երաժշտական մշակույթում: Նրանցից շատերը, Իրանի Իսլամական հեղափոխությունից (1979 թ.) հետո ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով հեռացել են Իրանից, ապրել և գործել են Հայաստանում, ԱՄՆ-ում և Եվրոպայում:

Իրանահայ կոմպոզիտորների գործունեությունը,որպեսհայ արվեստը միջազգային հարթակներում ներկայացնող կարևոր ոլորտ, կարիք ունի արժանի գնահատանքի նախ և առաջ Հայրենիքում: Հայ պրոֆեսիոնալ երաժշտարվեստի այս ընդգրկուն և գրեթե չուսումնասիրված շերտի քննությունը կարևոր է արդի ժամանակաշրջանում ձևավորված պատմաքաղաքական և մշակութային նոր հարաբերությունների տեսանկյունից և կարող է ասպարեզ հարթել հետագա հետազոտությունների համար:

**Թեմայի մշակվածության աստիճանը:**Իրանահայ կոմպոզիտորների երաժշտահասարակական, ստեղծագործական և կատարողական գործունեությունը համալիր ուսումնասիրության առարկա չի դարձել և երաժշտագիտական բավարար քննության չի ենթարկվել: Բացի առանձին կոմպոզիտորների ստեղծագործական հակիրճ դիմանկարներից՝ հոդվածների և հազվադեպ մենագրությունների տեսքով, չկա իրանահայ երաժշտական մշակույթին նվիրված հատուկ ուսումնասիրություն, որտեղ ամփոփված, վերլուծված և գնահատված է առավել նշանակալի հեղինակների ստեղծագործությունը: Մեր թեմային առնչվող գրականության մեջ անհրաժեշտ է նախ և առաջ առանձնացնել Ցիցիլիա Բրուտյանի երեք մեծ

աշխատությունները[1], որոնցից առաջինում՝ «Սփյուռքի հայ երաժիշտները» գրքում հեղինակն այբբենական կարգով ներկայացնում է սփյուռքում մեծ ճանաչում ունեցող, ինչպես նաև սկսնակ երաժիշտների լայն շրջանակ. իրանահայ գործիչներից բացառապես Նիկոլ Գալանդերյանն է ընդգրկված այդ գրքում: Առավել նշանակալի են Ց. Բրուտյանի մյուս երկու գրքերը. «Սփյուռքահայ երաժշտական մշակույթը» և «Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները», որոնցից առաջինը հետագայում դարձել է հեղինակի վերջին մեծածավալ գրքի մի մասը, ուր ընդգրկված են սփյուռքահայ բոլոր օջախները: Աշխատության մեջ տարբեր ընդգրկումներով ներառված են իրանահայ գրեթե բոլոր կոմպոզիտորները:

Կարևոր կենսագրական-տեղեկատվական աղբյուրներից են Լևոն Գրիգորյանին նվիրված գրքույկը՝ հրատարակված նրա հուշ-երեկոյի առթիվ[2], Ա. Պատմագրյանիև Ռ. Գրիգորյանի հոբելյանների կապակցությամբ տպագրված գրքույկները[3], ինչպես նաև Ա. Պատմագրյանի հուշերի առաջին հատորը[4], Արամ Երեմյանի հեղինակած «Երգահան Նիկոլ Գալանդէրեան» (Թեհրան, 1947 թ.) և Արա Տեր-Հովհաննիսյանի «Հուշեր երգահան Նիկոլ Գալանդէրեանի մասին» (Թեհրան, 1962 թ.) աշխատությունները: Առանձնահատուկ հետաքրքրություն ունի «Նիկոլ Գալանդէրեան, «Դու նորից եկել ես», երգեր, ինքնակենսագրութիւն» հատորը (Երևան, 1999 թ.), որտեղ կոմպոզիտորն ինքն է շարադրում իր կյանքն ու ստեղծագործական գործունեությունը: Արժեքավոր են նաև Ն. Գալանդերյանի երկերի լիակատար ժողովածուի հատորյակների համար գրած Մարինե Մուշեղյանի և Ցողիկ Բեքարյանի նախաբան-հոդվածները՝ երգերի ստեղծմանն առնչվող փաստական տվյալների ընդգրկումով:

Ատենախոսության թեմային վերաբերող կարևոր հրատարակումներ են Աննա Ասատրյանի հոդվածները՝ նվիրվածՆիկոլ Գալանդերյանին և Աշոտ Պատմագրյանին[5], Լիլիթ Հակոբյանի հոդվածը՝ Ն. Գալանդերյանի օպերաների

---

[1] Բրուտյան Ց., «Սփյուռքի հայ երաժիշտները», Երևան, 1968, Բրուտյան Ց., «Սփյուռքահայ երաժշտական մշակույթը», Երևան, 1982, Բրուտյան Ց., «Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները», Երեւան, 1996:

[2] Աճէմեան Հ., Լեւոն Գրիգորեան. Երաժշտագէտ, ուսուցիչ եւ խմբավար. Կյանքն ու գործը, Հրատարակութիւն յուշ-երեկոյի կազմակերպիչ յանձնախումբի, Թեհրան, 1957:

[3] Ա. Պատմագրեանի յոբելեանը (խմբ.՝ Պեպո Սիմոնեան), Պէյրութ, 1962:50 ամեայ յոբելեան Ռուբէն Գրիգորեանի երաժշտական գործունեութեան (պատրաստեց Մ. Մինասեանը), ԱՄՆ, 1979:

[4] Պատմագրյան Ա., Իմ հուշերից, Բեյրութ, 1978:

[5] Ասատրյան Ա., Աշոտ Պատմագրյան, Նշանավոր ճեմարանականներ, Ս. Էջմիածին, 2009, Պրակ Բ, էջ 329-338: Асатрян А., Ашот Патмагрян – Выдаюшийся деятель армянской музыкальной культуры в Иране // Армения-Иран: История. Культура. Современные перспективы взаимодействий, сб. статей, Москва, «Галлея-Принт», 2013, стр. 30-37. Ասատրյան Ա., Նիկոլ Գալանդերյան, Նշանավոր ճեմարանականներ, Ս. Էջմիածին, 2009, Պրակ Բ, էջ 67-75:

վերաբերյալ[6], Համիդ Ասքարի Ռաբորիի «Ժողովրդական երգերի խմբերգային մշակումները XX դարի երաժշտության մեջ», թեկնածուական ատենախոսությունը[7], Անահիտ Չթյանի՝ Գրիգորյաններիընտանիքին նվիրված հոդվածը[8]:

Ուսումնասիրված հեղինակներից միայն Էմմանուել Մելիք-Ասլանյանի մասին գոյություն ունի ծավալուն մենագրություն, որի հեղինակն է իրանահայ երաժշտագետ Լիդա Բերբերյանը[9]:Իրանահայ մշակույթի զարգացման պատմական ընթացքն ու ակնառու արվեստագետների համաստեղությունը ներկայացնող կարևոր հրատարակություն է Ալիս Նավասարգյանի «Անմահները» գիրքը[10]:

**Ատենախոսության նպատակն ու խնդիրները:** Իրանահայ գաղթօջախն իր անցյալի ու ներկայի երաժշտամշակութային ավանդույթներով չի կարող պարփակվել մեկ ուսումնասիրության շրջանակներում: Աշխատանքի նպատակն է հնարավորինս ամբողջական ընդգրկումով ներկայացնել իրանահայ կոմպոզիտորների բազմաժանր ստեղծագործությունը, նրանց բազմաձավալ երաժշտահասարակական գործունեությունը՝ ստեղծագործական կենսագրության լուսաբանումով:

Աշխատանքի առաջնային խնդիրներն են՝

- պարզաբանել իրանահայ գաղթօջախի երաժշտական ավանդույթների ձևավորման ու զարգացման առանձնահատուկ ընթացքը, ինչպես նաև գնահատել այդ ավանդույթները, որպես ժամանակակից հայ պրոֆեսիոնալ երաժշտարվեստի անքակտելի բաղադրիչ:
- ներկայացնել իրանահայ կոմպոզիտորների ստեղծագործական ժառանգությունը՝ ժանրային հատկանիշների,թեմատիկ ուղղվածության և կառուցվածքային սկզբունքների քննական վերլուծությամբ:
- առանձին ակնարկներով ներկայացնել իրանահայ կոմպոզիտորների տարբեր սերունդների ներկայացուցիչների՝ Ն. Գալանդերյանի և Լ. Բազիլի ստեղծագործական դիմանկարները, մեզ հասանելի և հրատարակված նյութի հիման վրա:

Առաջադրված խնդիրների և հարցերի լուսաբանումով ձգտել ենք ըստ արժանվույն գնահատել իրանահայ արվեստագետների գործունեությունը

---

[6]Հակոբյան Լ., Ն. Գալանդերյանի «Լալվարի որսը» օպերան, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանի ժողովածու, Երևան, 2013, էջ 182-189:

[7]Ասքարի Ռաբորի Հ., «Ժողովրդական երգերի խմբերգային մշակումները XX դարի երաժշտության մեջ», թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ ԱԻ Երևան, 2012:

[8] Չթյան Ա., Ռուբեն Գրիգորյան. երաժշտական գերդաստանի ականավոր գործիչը, Հայ արվեստի հարցեր 3, Երևան, 2010, էջ 131-144:

[9] Բերբերյան Լ., Էմմանուէլ Մելիք-Ասլանեան, դաշնակահար կոմպոզիտոր, Երևան, 2007:

[10] Alice Navasargian, The Immortals, A Pictorial Anthology of Historiographic Works, Brief History of Armenia & Armenians in Persia, Glendale, California, 2012.

Իրանի պրոֆեսիոնալ երաժշտական մշակույթի զարգացման ոլորտում:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Կարևորելով իրանահայ գաղթօջախի կյանքին և գործիչներին նվիրված ուսումնասիրությունների նշանակությունը, պետք է նշել, որ բազմաթիվ խնդիրներ պարզապես հիշատակված կամ թվարկված են և չեն դարձել առավել խորը մասնագիտական քննության առարկա: Ատենախոսության մեջ առաջին անգամ՝

- դասակարգել և ուսումնասիրել ենք իրանահայ կոմպոզիտորների տարբեր սերունդների ստեղծագործական ժառանգությունը համապատասխան ժամանակափուլերի համատեքստում:
- քննության առել նրանց առավել նշանակալի երկերը, արժևորել դրանք ինչպես հայ երաժշտության, այնպես էլ Իրանի պրոֆեսիոնալ երաժշտարվեստի շրջանակներում:
- ներկայացրել իրանահայ կոմպոզիտորներ Ն. Գալանդերյանին և Լ. Բազիլին նվիրված առանձին երաժշտավերլուծական ակնարկներ՝ 20-րդ դարի պրոֆեսիոնալ երաժշտարվեստում դիտելի միտումների տեսանկյունից:
- արժևորելիայ արվեստագետների ներդրումը իրանական մշակույթում՝ դասական երաժշտության կատարողական, ստեղծագործական չափանիշների սահմանման, Իրանում դասական երաժշտարվեստի զանազան ժանրերի զարգացման, ժողովրդական երգերի մշակման ու կոմպոզիտորական ստեղծագործության մեջ դրանց կիրառման դիտակետերից:

Ատենախոսությունը ներառում է ուսումնասիրվող կոմպոզիտորների արխիվներից ձեռք բերված անտիպ գրականություն, ինչպես նաև նորահայտ նոտային նմուշների և որոշ ձայնագրությունների հիման վրա կատարված վերլուծականներ: Հնարավորինս ի մի ենք բերել և մեկնաբանել իրանական գիտական հրապարակումներում և մամուլում հայ երաժիշտների ստեղծագործությանն ու երաժշտա-հասարակական գործունեությանը տրված գնահատականները:

Մեզ հետաքրքրող արվեստագետներին նվիրված ստեղծագործական ակնարկներն առավել ավարտուն դարձնելու նպատակով 2013 թ. մեկնել ենք Թեհրան (ԻԻՀ): Հնարավորություն ենք ունեցել աշխատելու «Արարատ» մշակութային միության, «Ալիք» օրաթերթի խմբագրության արխիվներում՝ ձեռք բերելով հուշագրություններ, հրապարակախոսական բնույթի հոդվածներ, անտիպ և հրատարակված տարաբնույթ նյութեր: Հարցազրույցներ և անձնական շփումներ ենք ունեցել խմբավար Տիգրան Սուքիասյանի, երաժշտագետ Լիդա Բերբերյանի, Մակարյանների երաժշտական ընտանիքից՝ Հրաչուհի Մակարյանի, կոմպոզիտոր Վարդան Սահակյանի և այլ անվանի արվեստագետների հետ, մասնակցել համայնքի կազմակերպած տարբեր մշակութային միջոցառումներին՝ ծանոթանալով իրանահայ գործիչներին և արվեստագետներին հուզող արդի խնդիրներին ու գործունեությանը:

Թեհրանում ձեռք բերված նյութերի շրջանակներում նշելի են նաև տարիներ շարունակ գործող պարբերականները՝ «Արարատ» և «Սիփան»

մշակութային միությունների ամսագրերը, հանրահայտ «Ալիք» օրաթերթը, ինչպես նաև շուրջ 8 տասնամյակ հրատարակվող «Ռաֆֆի» օրացույցը, որոնցում ներառված հանրագիտարանային տեղեկատվական բաժինների նյութը նպաստել է որոշ տվյալների ճշգրտմանը:

Ուսումնասիրության ընթացքում մենք ձեռք ենք բերել նաև ամերիկաբնակ հեղինակ Ալիս Նավասարգյանի՝ իրանահայ արվեստագետներին վերաբերող անտիպ և հազվագյուտ նյութերի հավաքածուն, որն էապես լրացրել և ամբողջացրել է մեզ հասանելի տեղեկատվական-փաստական նյութը:

**Ատենախոսության գործնական նշանակությունը:** Աշխատանքում ամփոփված պատմամշակութային բնույթի տեղեկատվական նյութերը, իրանահայության մշակութային կյանքի ընդհանուր ուրվագիծը, արվեստագետների ստեղծագործական դիմանկարները և նրանց ժառանգությանը վերաբերող վերլուծությունները կարող են տեղ գտնել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտության պատմության, ինչպես նաև Արևելքի ավանդական երաժշտության հիմնախնդիրների դասընթացների ծրագրերում:

Պարսկահայ կոմպոզիտորների երկերը կարող են ընդգրկվել կոնսերվատորիայի տարբեր կատարողական բաժինների, երաժշտական այլ կրթօջախների, ինչպես նաև իրանահայ համայնքի կրթական հաստատությունների ծրագրերում, նպաստելով իրանահայ կոմպոզիտորների գործերի տարածմանն ու շարունակական կենցաղավարմանը:

**Ատենախոսության մեթոդաբանական հիմքը:** Աշխատանքում նպատակահարմար ենք գտել առաջնորդվել պատմա-տեսական և համեմատական ուսումնասիրության մեթոդով: Այդ եղանակով փորձել ենք արժևորել իրանահայ արվեստագետների պրոֆեսիոնալ գործունեությունը, նրանց ստեղծագործությունների ժանրային դրսևորումների շրջանակը թե՛ իրանական, և՛ թե հայկական երաժշտության պատմական ընթացքի և ձևավորման առանձնահատկությունների տեսանկյունից:

**Ատենախոսության փորձաքննությունը:**Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի2017 թ. հոկտեմբերի 23-ի նիստում: Հիմնական դրույթներն արտահայտվել են 2 միջազգային գիտաժողովներում հեղինակի կարդացած զեկուցումներում (Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 8-րդ նստաշրջան՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին, Երևան-Արզական, 15-17 նոյեմբերի, 2013թ., Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 10-րդ նստաշրջան՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին, Երևան, 10-11 նոյեմբերի, 2015թ.) և 6 գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը:**Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, հինգ գլուխներից (Գլուխ առաջին՝ «Իրանահայ երաժշտական մշակույթի ձևավորման պատմությունից», Գլուխ երկրորդ՝ «Հայ երաժիշտների

գործունեությունը Իրանի պրոֆեսիոնալ երաժշտարվեստի համատեքստում (1890-1930-ական թվականներ)», Գլուխ երրորդ՝ «Նիկոլ Գալանդերյան (1881-1944)», Գլուխ չորրորդ՝ «Իրանահայ կոմպոզիտորական արվեստը (1930-1990-ական թվականներ)», Գլուխ հինգերորդ՝ «Լյուդվիգ Բազիլ (1931-1990)»), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (146 էջ):

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

**«Իրանահայ երաժշտական մշակույթի ձևավորման պատմությունից»**

Գաղթօջախների շարքում իր վաղեմի պատմությամբ ու մշակույթով առանձնահատուկ տեղ ունի Պարսկահայքը, որն իր սկզբնավորման հիմքերով և պատմական հանգամանքների բերումով առանձնանում է հայկական Սփյուռքի մյուս գաղթօջախներից:

Պարսկաստանում առաջին գաղթավայրերի գոյությանն ու դրանց նկարագրությանն առնչվող տեղեկություններն առկա են Մ. Խորենացու, Փ. Բուզանդի, Ագաթանգեղոսի և Եղիշեի, Ղ. Փարպեցու, Ղևոնդի և այլոց պատմություններում: Արդեն X-XI դարերից Պարսկահայքի և Արտազի հայկական համայնքների մասին հիշատակություններ կան բազմաթիվ աշխատություններում: Իր չափերով աննախադեպ էր շահ Աբբաս Ա-ի (1587-1629 թթ.) կազմակերպած բռնագաղթը 17-րդ դարի սկզբին. շուրջ 300 հազար հայ տարհանվել և տեղափոխվել են դեպի Պարսկաստանի խորքերը: Գնահատելով հայ ժողովրդի մտավորու ստեղծագործական ներուժը, Ջուղայի և Նախիջևանի ավերումից հետո, շահը հայերին շնորհել է արտոնություններ և հողեր՝ Սպահանի արքունական տարածքում, որտեղ էլ հետագայում ձևավորվել է Նոր Ջուղան: XVII դարիընթացքումՆորՋուղայիգաղթօջախնանզուգական դեր է կատարել թե՛ Իրանի, թե՛ ողջ հայությանքաղաքական, գիտականու մշակութային կյանքում, եղել է *«գաղութային հայ կապիտալի»* ամենամեծ և հզոր կենտրոնը և հանդես եկել որպես *«Իրանի քաղաքակրթության զարգացմանը նպաստող ուժ»*[11]: 20-րդ դարից գաղթօջախի կենտրոնն է դարձել Թեհրանը:

Հայերի մեծ ներդրումների վերաբերյալ՝ ընդհանրապես Իրանի տնտեսության, գիտության և մշակույթիասպարեզներում, ծավալուն աշխատություններ են գրվել պարսիկ գիտնականների կողմից: Ժամանակակից հայտնի պատմաբաններ Խոսրով Չաքերին[12] և Աբբաս-Ալի Սալեհին[13], անվանի գրող, գիտնական Էսմայիլ Ռայինը[14] և այլք իրենց մենագրություններում քննարկել և բարձր են գնահատել իրենց պատմությունից «անտարանջատ»իրանահայերի «ֆենոմենալ» գործունեությունը:

---

[11] Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. Արդիհիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 9:

[12] Chaqueri C., The Armenians of Iran, The paradoxical of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, ed. by Chaqueri C., Harvard Center for Middle Eastern Studies, 1998.

[13] ع باسعد یصالحی «شرححال چهارده فرازمسدیحیاندایرانی - ههههیهذیاندقشآفریهمسدیحی» تهران۷۴۳۱

Սալեհի Ա., Մեր հայրենակից քրիստոնյա խոշոր գործիչները, Թեհրան, 1348(1969):

[14] Rain I., Iranian-e Armani. Tehran: Amir Kabir Publishers. 1349 (1970).

Իրանահայ գաղթօջախի երաժշտական մշակույթընույնպես հարուստ դրսևորումներ է ունեցել տարբեր դարաշրջաններում: Հատկանշական է, որ գրեթե բոլոր շրջաններին նվիրված ուսումնասիրություններում, թե՛ հայ, թե՛ պարսիկ հեղինակների գրվածքներում հայ երաժիշտներին տրված գնահատականները համանման են և վկայում են իրանահայերի մեծ ավանդը տեղի երաժշտական արվեստի զարգացման մեջ:

Պարսկական մոնոդիկ երաժշտությունը XX դարասկզբին կանգնեց դասական երաժշտարվեստին հաղորդակցվելու խնդիրների առջև: Եվրոպական ավանդույթների տեղայնացման գործը Իրանում կապվում է անվանի երաժիշտներ Ալինաղի Վազիրիի (1887-1979 թթ.) և Ռուհոլլահ Խալեղիի (1906-1965 թթ.) հետ, որոնք աշխատել են հիմնականում դասականավանդական երաժշտարվեստի ոլորտում: Սակայն Իրանի ժողովրդական երգի գրառման և խմբերգային ու գործիքային մշակումների ասպարեզում առաջատար դեր են կատարել հայ կոմպոզիտոր-երաժշտագետները: Իրանի պրոֆեսիոնալ երաժշտության ասպարեզում մասնավորապես նշելի են պարսիկ կոմպոզիտորներ Ամինոլա Հոսեյնի (1905-1983 թթ.) և Փարվիզ Մահմուդի (1910-1996 թթ.) անունները, որոնք իրենց կրթությունը ստանալով Ռուսաստանի և Եվրոպայի քաղաքներում, ստեղծագործել են դասական ժանրերում (վոկալ, գործիքային, նվագախմբային և այլն): Անհրաժեշտ է նկատել, որ այս հեղինակները դեռևս ուսումնառության շրջանում էին, երբ արդեն որոշակի ճանաչում ձեռք բերած հայ երաժիշտները (ոչ միայն ստեղծագործող, այլև՝ կատարող և մանկավարժ) հաջողությամբ իրականացնում էին նորանոր ժանրերի կիրառության բեղմնավոր փորձերը: 1920-ականների վերջին Ն. Գալանդերյանն (1881-1944 թթ.) արդեն ներկայացրել էր իր օպերաները, կվարտետը և կամերային ժանրի այլ երկեր, իսկ Լ. Գրիգորյանը (1886-1957 թթ.)՝ բեմադրել Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան պարսկերեն թարգմանությամբ, 1930-ականների սկզբներին, որ Իրանում առաջին պարսկալեզու ներկայացումն էր. մինչդեռ Իրանի Ռուդաքիի անվան օպերային և բալետի ազգային թատրոնը բացվել է 1967-ին:Ռ. Գրիգորյանը, որպես նորարար, Թեհրանում հիմնելով «Թեհրան» քառյակը (1941 թ.), ըստ ամենայնի դարձել է այդ ժանրի և կատարողական ավանդույթների ներմուծողը Իրանի մշակույթ: Նա ղեկավարել է Իրանի սիմֆոնիկ նվագախումբն ու Թեհրանի կոնսերվատորիան (1948-1951 թթ.) և իր լայնահուն գործունեությամբ զարգացման նոր փուլ նշանավորել Իրանի դասական երաժշտարվեստում՝ XX դարի միջին տասնամյակներում:Այս իրողությունն արձանագրվել է Իրանի տարբեր մշակութային ու քաղաքական գործիչների ելույթներում, մասնավորապես Իրանի Բարձրագույն կրթության խորհրդի նախագահ Ռեզա Գորգանն ասել է, որ նա *պարսկական երաժշտության պատմության մեջ մի նոր դարաշրջան է բացել*[15]:

---

[15]Բրուտյան Ց., «Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփյուռ ընձյուղները», Երևան, 1996, էջ 197: Այդ մասին հիշատակված է նաև իրանահայ խմբավար, երգահան, մանկավարժ Տ. Սուքիասյանի անտիպ ուսումնասիրություններում:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
## «Հայ երաժիշտների գործունեությունը Իրանի պրոֆեսիոնալ երաժշտարվեստի համատեքստում (1890-1930-ական թվականները)»

XIX դարի վերջին և XX դարասկզբին իրանահայ գաղթօջախի մշակութային կյանքի աննախադեպ զարգացմամբ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին պրոֆեսիոնալ երաժշտության վերելքի, դասավանդման ու տարածման համար ինչպես հայկական օջախում, այնպես էլ՝ ընդհանրապես պարսկական միջավայրում:

Բնականաբար, հայ երաժիշտների ստեղծագործական հարուստ ունակությունները նախապես առավել լիարժեք են դրսևորվել ներհամայնքային միջավայրում: Իրանահայ կոմպոզիտորների առաջին՝ մեր պայմանական տարբերակմամբ, սերնդի ներկայացուցիչներ Արտաշես Տեր-Հովհաննիսյանը, Նիկոլ Գալանդերյանը, Լևոն Գրիգորյանը, Աշոտ Պատմագրյանը և Համբարձում Գրիգորյանը եվրոպական արվեստի և կրթության հիմնադիրներից են Իրանում: Թավրիզում և Սպահանում բացված հայկական դպրոցներում, հիմնական ծրագրից բացի, սկսել են դասավանդել երգ-երաժշտություն, նոտագրություն: Խնդիրն իրականացվել է Հայաստանից, ինչպես նաև եվրոպական երկրներից հրավիրված ուսուցիչների միջոցով: Մեզ մատչելի նյութերի և տեղեկությունների համաձայն առաջին նշանակալի երաժշտական գործիչը, երաժշտագետը, խմբավարն ու ստեղծագործողը **Արտաշես Տեր-Հովհաննիսյանն** է(1870-1960 թթ.)՝ ծնունդով Թավրիզից, որը մեծ դեր է կատարել իրանահայության երաժշտական կյանքում: Դարավերջին Ա. Տեր-Հովհաննիսյանը հիմնել է «Երաժշտասերների միություն», իսկ 1902-ին՝ առաջին երաժշտախումբը (նվագախումբ) և առաջին քառաձայն երգչախումբը, ծավալել հասարակական, մանկավարժական և համերգային բուռն գործունեություն: Նրա ակնածելի գործը շարունակություն և նոր զարկ է ստացել երգահան, երաժշտագետ, խմբավար Լ. Գրիգորյանի ջանքերով: **Լևոն Գրիգորյանը** (1886-1957 թթ.)՝ Գրիգորյանների երաժշտական ընտանիքի նահապետը, իր երաժշտահասարակական բազմաբնույթ գործունեությամբ հետաքրքրություն է սերմանել դասական արվեստինկատմամբ և՛ հայերի, և՛ պարսիկների շրջանակներում: Իրանում մեծ համբավ ուներ 1916-ին նրա հիմնադրած «Սալոն» նվագախումբը, որը գործել է մինչև 1946-ը: Առանձնապես գնահատելի է նրա մանկավարժական գործունեությունը (Իրանի գահաժառանգների երաժշտական կրթությունը վստահվել է Լ. Գրիգորյանին): Վերադառնալով Եվրոպայից, երկար տարիներ դասավանդել է Թավրիզի հայկական դպրոցներում, ապա Թեհրանի կոնսերվատորիայում (1940-1957 թթ.): Այդ ընթացքում նա պարսկերեն և հայերեն է թարգմանել եվրոպական լեզուներով գրված բազմաթիվ դասագրքեր և օգտագործել դասավանդման ընթացում: 1950-ին, Թավրիզում հիմնադրել է նվագախումբ, որի անդամների մեծ մասն իր նախկին սաներն էին, իսկ 1956-ին,իր սաներից մեկի՝ ջութակահար Զավեն Եդիգարյանի հետ միասին

Թավրիզում հիմնադրել է Իրանի երրորդ կոնսերվատորիան:

Բեղմնավոր է եղել նաև Գրիգորյանների երաժշտական ընտանիքի մեկ այլ ներկայացուցչի՝ **Համբարձում Գրիգորյանի** (1893-1975 թթ.)ստեղծագործական, մանկավարժական և համերգային գործունեությունը: Եվրոպայում կրթություն ստանալուց հետո վերադառնալով Թեհրան, 1920-ականների վերջին նա հիմնել է «Քնար» նվագախումբը և «Կոմիտաս» երգչախումբը, որը գործել է շուրջ 40 տարի: 1935-ին՝ Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի տոնակատարությունների ժամանակ, շահը Հ. Գրիգորյանին պարգևատրել է «Հոմայուն» շքանշանով՝ Իրանի ազգային օրհներգը մշակելու և իր ղեկավարած «Կոմիտաս» երգչախմբով կատարելու համար[16]:

**Աշոտ Պատմագրյանը** (1898-1981թթ.) սերում էր XVII դ. պատմագիր Առաքել Դավրիժեցու գերդաստանից. նամեծ համբավ է ձեռք բերել իրբազմաբեղուն գործունեությամբ,որը չի պարփակվել միայն Իրանի սահմաններում, այլ տարածվել է աշխարհի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում: Որպես երաժշտագետ, կոմպոզիտոր, խմբավար, նաև երաժշտահասարակական գործիչ Ա. Պատմագրյանը եղել է Իրանում երաժշտական կյանքի նոր փուլի կայացման ակտիվ մասնակիցը: Հայ երգին զուգահեռ, նա զբաղվել է նաև պարսկական ժողովրդական երգի մշակումներով: Այդպիսով, Իրանի ժողովուրդն առաջին անգամ հնարավորություն է ստանում լսել իր երգը քառաձայն ներդաշնակված և նվագախմբային հնչողությամբ: Պատմագրյանը հատուկ պատվեր է ստացել գրել օպերա Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի տոնակատարությունների առիթով, որը ներկայացվել է պարսկերենով[17]:

Եվրոպական բարձրագույն երաժշտական կրթություն ստացած հայ երաժիշտներն արժանացել են Իրանի պետական բարձրագույն կրթական և մշակութային բազմաթիվ շքանշանների: Նրանք ճանաչված են կոմպոզիտորի, դիրիժորի, խմբավարի ու մանկավարժի բազմակողմանի և արդյունավետ գործունեությամբ: Գրեթե բոլոր հեղինակներն անդրադարձել են իրանական երգերին, մշակել կամ բազմաձայնել դրանք՝ իրանական ազգային երաժշտությանն աստիճանաբար հաղորդելով բազմաձայն և սիմֆոնիկ հնչողություն:

Միևնույն ժամանակ, նրանց ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցրել հայկական ժողովրդական և հոգևոր երգերի մշակումներն ու փոխադրությունները, մասնավորապես անդրադարձը Կոմիտասի արվեստին, որը դրսևորվել է թե՛ ստեղծագործական մշակումների տեսքով, և՛ թե պարտադիր մասն է կազմել նրանց բոլորի համերգային կատարողական գործունեության:

---

[16] Մակարյան Ա., Մոխրացած հուշեր, Բոստոն, 1998, էջ 286:

[17] Օպերայի ներկայացումից հետո, 1943-ին պարսկական կառավարությունը նրան շնորհել է պետական բարձրագույն «علم»(Էլմի – գիտություն) շքանշան:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
## «Նիկոլ Գալանդերյան (1881-1944)»

Իրանահայ երաժշտական մշակույթի ձևավորման հիմնադիր-ներկայացուցիչների շարքում առանձնապես ակնառու է **ՆիկոլԳալանդերյանի** (1881-1944 թթ.) լայնահուն և բազմաժանր գործունեությունը: Հետաքրքիր է նշել, որ Գալանդերյանը մասնագիտական լիարժեք կրթություն չի ստացել. թեև նա ծագումով Իրանից չի եղել՝ ծնվել է Ակնում, սակայն իր հասուն ստեղծագործական կյանքն ապրել է Թեհրանում և իր գործով հավասարապես ծառայել իրանահայ և իրանական պրոֆեսիոնալ երաժշտարվեստի զարգացմանն ու տարածմանը: Ի տարբերություն վերը հիշատակված մյուս կոմպոզիտորների, Ն. Գալանդերյանի ստեղծագործական ամբողջ ժառանգությունը հասանելի էև գրեթե ամբողջությամբ հրատարակված: Ն. Գալանդերյանն առավել մեծ ժողովրդականություն է վայելում իր երգերով: Դրանցից շատերը շրջանառվել են հայկական քաղաքային ռոմանսների երկացանկում՝ երբեմն կատարվելով որպես անհեղինակ երկեր: Կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգության մեջ՝ հրատարակված երկերի լիակատար ժողովածուում, կարևոր տեղ են զբաղեցնում նաև վոկալ և գործիքային ստեղծագործությունները (օպերա, լարային կվարտետ և այլն), որոնք ժանրի կիրառման առաջին քայլերից են եղել Իրանում:

ԵՐԳԵՐ. Կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգության հիմնական մասն են կազմում նրա երգերը, որոնք նա ստեղծել է 1911-1943 թթ. ընթացքում: «Յոյսերի եւ յոյզերի մրմունջներ» 3 հատորներում ընդգրկված 332երգերը ներկայացված են միաձայն գրառմամբ, առանց նվագակցության կամ ներդաշնակման: Բացառություն է կազմում, Դևի (Մ. Ղարաբեկյան) բանաստեղծություններով գրված 11 երգից կազմված «Դու նորից եկել ես» ժողովածուն, որտեղ ընդգրկված երգերն ունեն հեղինակային ներդաշնակում: Ծանոթանալով Ն. Գալանդերյանի արխիվի նյութերին, մենք առանձնացրել և քննության ենք առելշուրջ 50 անտիպ երգեր՝ հեղինակի դաշնամուրային ներդաշնակմամբ:

Ն. Գալանդերյանի կատարած դասակարգումները օգնում են պատկերացում կազմելու նրա երգային ժառանգության ժանրային առանձնահատկությունների վերաբերյալ՝ երգ (aria), սիրերգ (romance), ժողովրդական մեներգեր, աշուղական երգեր, մանկական երգեր և այլ ժանրային տարատեսակներ: Մելոդիստ կոմպոզիտորի ստեղծած մեղեդիներն իրենց ամբողջության մեջ ոճական բազմազանությամբ չեն առանձնանում և հենվում են տիպականացված դարձվածքների տարբերակված համակարգի կիրառության վրա: Այսուհանդերձ նրա ժառանգության մեջ տեղ գտած երգերի զգալիմասն ունի իր անհատականացված նկարագիրը: Լավագույն օրինակներից կարող ենք նշել՝ «Ախ, ես սիրո ճամբին» (op. 528), խոսք՝ Ա. Իսահակյանի, «Մոռանալ» (op. 27), «Ոչ տրտունջ, ոչ մրմունջ» (op. 40), «Աշուն

է, անձրեւ» (op. 108), խոսքեր՝ Վ. Տերյանի, «Սիրտս նորից քեզ հիշեց» (op. 551) խոսք՝ Լ. Բզնունու (op. 571), «Կապույտ աղջիկ» (op. 96), «Դու նորից եկել ես» (op. 323) խոսք՝ Դևի երգերը, որոնք առանձնապես ներգործուն են իրենց մեղեդիական արտահայտչականությամբ, ավարտուն կառույցներով, բանաստեղծական տեքստի իմաստային մեկնաբանության շեշտադրումներով:

Գալանդերյանը մեծապես արժևորել է ժողովրդական արվեստը և իր երգերում հմտորեն օգտագործել դրա արտահայտչական տարրերը: Նրա մեղեդային մտածողությունը անմիջականորեն բխում է հայ ժողովրդական երգաստեղծության տարբեր ժանրային ոլորտներից: Երգերի մի ստվար խումբ (մոտ 90 երգ) բնութագրվում է հայկական ժողովրդական երաժշտարվեստի լադային և լեզվաոճական հատկանիշների ցայտուն դրսևորմամբ:Երևույթն ակնհայտ է Գալանդերյանի, ինչպեսնաև Ա. Իսահակյանի և Հ. Թումանյանի խոսքերով գրված բազմաթիվ երգերում և, հատկապես,բանաստեղծական տեքստի հեղինակի փոխարեն «ժողովրդական» նշում ունեցող նմուշներում:

Ն. Գալանդերյանի երգային ժառանգության մեջ մենք կարևորել ենք նաև Ակնա երաժշտական բանահյուսությանն առնչվող նմուշները, որոնց լեզվաոճական և արտահայտչական առանձնահատկությունները զուգորդվում են Ակնում կենցաղավարած և Կոմիտասի գրառած երգերի ընդհանուր ուրվագծերի հետ. մասնավորապես՝ բարդ մեղեդիական կառույցների, ձայնակարգային յուրահատկությունների, շեղումների, զարդանախշերի առատության, նաև մեղեդիական բարձրակետի վարընթաց շարժման կիրառության օրինաչափություններում: Նշված հատկանիշների առկայությունը Գալանդերյանի որոշ երգերում հետաքրքրական է նաև երաժշտական բանահյուսության ուբարբառագիտության, ինչպես նաև Արևելյան Հայաստանի տարբեր ազգագրական գոտիներում ձևավորված երաժշտական լեզվամտածողության, ոճական արտահայտչական միջոցների համեմատական քննության առումով:

Մոտ երկու տասնյակ ՋՈՒԳԵՐԳԵՐԸԵՎԱՆՍԱՄԲԼՆԵՐԸ հրատարակվել են Ն. Գալանդերյանի երկերի ժողովածուի Ը[18] հատորում: Ժողովածուում զետեղված զուգերգերի մի մասը ներկայացված են միայն ձայնաբաժինների գրառմամբ՝ առանց ներդաշնակության, մյուս մասն իրենից ներկայացնում է համանուն միաձայն երգի մշակումը: Հանդիպում են նաև համարներ, որոնք չունեն միաձայն տարբերակ:

Այս հատորում ընդգրկված են նաև 3 վոկալ անսամբլներ, որոնցից 2-ը ձայնի, լարային քառյակի և դաշնամուրի համար կատարված մշակումներ են հիմնված հեղինակի երգարվեստի ճանաչված նմուշներից՝ «Մոռանալ, մոռանալ» (op. 27, խոսք՝ Վ. Տերյանի) և «Մի թունավորիր» (op. 54, խոսք՝ Ա. Տիգրանյանի)

---

[18] Ն. Գալանդերյան, Զուգերգեր և անսամբլներ, Ը, Երևան, 2003: Ժողովածուի կազմողը և նախաբանի հեղինակն է երաժշտագետ Մ. Մուշեղյանը: Նա նշում է, որ ընդգրկված բոլոր երկերն ունեն 2 և ավելի սևագիր տարբերակներ, որոնցից ընտրված են առավել հետաքրքիր և ավարտուն նմուշները:

երգերի վրա:Հատորի վերջում զետեղված է «Անուշի» նախերգանքը՝ գրված երգչախմբի, թավջութակի և դաշնամուրի համար:

Աշխատանքի սահմանները չեն թույլ տվել մանրամասն վերլուծության ենթարկել Ն. Գալանդերյանի ՕՊԵՐԱՆԵՐԸ: Նշենք միայն, որ Վ. Միրաքյանի «Լալվարի որսը» պոեմի, Հ. Թումանյանի «Փարվանա» լեգենդի հիման վրա1926 և 1927 թթ. գրված համանուն և,Վրթ. Փափազյանի «Լուր-դա-լուր» երկի հիման վրա գրված «Հովիվ» (1932 թ.) օպերաները, մեզ են հասել կլավիրային տեսքով: Այս կամերայինքնարական օպերաների քննությունը առանձին ուսումնասիրության նյութ է[19]:

Ն. Գալանդերյանի ժառանգության կարևոր հատվածն են կազմում ԽՄԲԵՐԳԵՐԸ[20], որոնցում արտահայտված են զգացմունքների և հույզերի լայն շերտեր: Շուրջ 5 տասնյակ խմբերգերում կարելի է տարբերակել քնարական, ժողովրդական երգի ոգով ստեղծված ծիսական, աշխատանքային խմբերգեր, նաև պարերգեր և հոգևոր երգերի մշակումներ: Ժողովրդական երգարվեստին բնորոշ հնչողությունը ակնհայտ է նաև խմբերգերում:

Ն. Գալանդերյանի ստեղծագործության լուսաշող անկյունում են ՄԱՆԿԱԿԱՆՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ երգերն ու օպերաները, որոնք կազմում են նրա երկերի Ե հատորը[21]: Դրանցից ժողովածուում ներառվել են 30 հայերեն երգ և 5 երաժշտադրամատիկական փոքր երկեր, որոնք հեղինակն անվանել է օպերաներ[22]:

Կոմպոզիտորի ժառանգության առավել քիչ հայտնի մասն են կազմում ԳՈՐԾԻՔԱՅԻՆՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Նրա երկերի ժողովածուի Զ հատորում զետեղված են ավելի քան 100 կամերային-գործիքային երկեր, այդ թվում՝ դաշնամուրային պարեր, երկեր ջութակի և դաշնամուրի համար, ջութակի մենանվագ պիեսների 2 տետրեր և տարբեր կազմերի համար գրված 5 կամերային անսամբլներ:

Եթե խմբերգային արվեստում Գալանդերյանին բնորոշ է վառ ազգային մտածողությունը, ապա գործիքային երկերում ակնհայտ է ընդհանուր արևելյան, մասնավորապես իրանական ազգային երաժշտամտածողության կնիքը: Դրանցում հաճախ են օգտագործված արևելյան պարեր, ինչպես օրինակ դաշնամուրային մանրանվագներում՝ «Հարեմում» op. 61, «Նուշի պարը» op. 61, «Հարեմի պարը» op. 297, «Նազ-նազ» op. 481, շուրջ տասնյակ այլ Կենտպարեր՝ «Արևելյան պարեր» շարքից: Ընդունված է համարել, որ Գալանդերյանը հիմնականումիրանահայ գաղթօջախի սահմաններում գործող երգահան էր. իր այս պիեսներում վարպետորեն կիրառած իրանական ավանդական մոնոդիկ

---

[19] Տե՛ս Հակոբյան Լ., նշվ հոդվածը:

[20] Ն. Գալանդերյան, Խմբերգեր, Դ, Երևան, 2001:

[21] Ն. Գալանդերյան, Մանկական ստեղծագործություններ, Ե, Երևան, 1999:

[22] Հայտնի է, որ մանկական երգերը շուրջ 50 են եղել, որոնց մի մասը, ինչպես նաև 8 օպերաներից երեքի («Ծաղիկների երգը», «Կնունք-կնունք», «Ծիծեռնակի գալուստը»)բնագրերը բացակայում են ԳԱԹ-ում պահվող նրա արխիվում:

նմուշների՝ Շուշթարի, Չարգահի ռիթմական և մեղեդային բնորոշ ելևէջումները, ինչպես նաև պարսկերեն տեքստերով ստեղծված մանկական երգերի գոյությանն առնչվող փաստերը, որոնք դեռևս մեզ չի հաջողվել հայտնաբերել, խոսում են կոմպոզիտորի արևելյան հետաքրքրությունների ավելի լայն ընդգրկման մասին:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
## «Իրանահայ կոմպոզիտորական արվեստը (1930-1990-ական թվականները)»

Աշխատանքի տվյալ բաժնում ներկայացրել ենք 1930-ական թվականներից մինչև XX դարավերջը գործունեություն ծավալած իրանահայ կոմպոզիտորներին, ովքեր շարունակելով իրենց նախորդների սկսած բեղմնավոր ստեղծագործական, գիտալուսավորչական և մանկավարժական գործը, մեծապես նպաստել են Իրանի պրոֆեսիոնալ երաժշտարվեստի անընդմեջ զարգացմանը: Թեև նրանց ստեղծագործությունը լայն արձագանք չի ստացել և մասամբ էլ անծանոթ է Հայրենիքում, Իրանի պրոֆեսիոնալ երաժշտարվեստի ձևավորման և զարգացման տեսանկյունից դժվար է գերագնահատել նրանց դերը: Այդ արվեստագետների և մշակութային գործիչների շարքում առանձնապես նշելի են Ռուբեն Գրիգորյանի (1915-1991 թթ.), Էմմանուել Մելիք-Ասլանյանի (1915-2003 թթ.), Հրանտ Բեկլարյանի (ծնվ. 1927 թ.), Ալֆրեդ Մարդոյանի (ծնվ. 1930 թ.), Լյուդվիգ Բազիլի (1931-1990 թթ.), Ավետիս Ջամբազյանի (1932-1992 թթ.) անունները: Այս հեղինակների ստեղծագործության և գործունեության քննությունը տվյալ ժամանակափուլում արտացոլում է Իրանի մշակույթի ընթացքը մինչև XX դարի 70-ականների վերջը՝ այն է մինչև Իրանի Իսլամական հեղափոխությունը (1979 թ.):

Ռ. Գրիգորյանը՝ հայտնիորպես իրանական և հայկական ժողովրդական երգերի գրառող, մշակող և հրատարակող, թե պարսիկների, թե հայերի կողմից ընկալվել է, իբրև «յուրովի Կոմիտաս», անշուշտ, ստեղծագործական օժտվածության և հավաքչական գործունեության այլ չափաձևերով և մասշտաբներով[23]: Ռ. Գրիգորյանի ստեղծագործություններից առավել հայտնի են «Նաիրի», «Իրանական» սիմֆոնիկ սյուիտները, «Տատրագոմի հարսը» սիմֆոնիկ պոեմը, «Շողոքորթը» օպերետը, «Սուրբ Ծննդյան» շարականները կամ «Ռեքվիեմը»՝ մեծ սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի և մենակատարների համար, որը Կոմիտասի Պատարագի նվագախմբային փոխադրությունն է: Հրատարակված գործերի սակավության պատճառով աշխատանքում հիմնականում քննության ենք առել Ռ. Գրիգորյանի պարսկական երգերի մշակումները, դաշնամուրային պիեսները, երգերը և Պատարագը: Եթե կոմպոզիտորի դաշնամուրային պիեսներում («Թափոր», «Սկերցո») և երգերում

[23] Այդ մասին վկայություններ կան պարսկահայ մամուլի էջերում, Տ. Սուքիասյանի արխիվային անտիպ նյութերում, ինչպես նաև Ա. Չթյանի վերը նշվածհոդվածում:

(«Գիշերային», «Ձյուն» և «Ծիծեռնակ»)հստակ արտահայտված են եվրոպական դասական երաժշտությանը բնորոշ արտահայտչամիջոցներն ու տեխնիկական հնարները, ապա Պատարագում՝ ուսումնասիրելով և համադրելով Կոմիտասի ևՄ. Եկմալյանի Պատարագները, հետամուտ էկոմիտասյան մշակման սկզբունքներիստեղծագործական կիրառությանը:

Ռ. Գրիգորյանի անունն իր հաստատուն տեղն է գրավում Իրանի երաժշտական մշակույթի պատմության մեջ, իսկ իր լուսավորչական, հասարակական, ստեղծագործական և համերգային բազմաբովանդակ կյանքով նա եղել է հայ երաժշտարվեստի երախտավոր ջատագովներից մեկը:

Որպես փայլուն ջութակահարի՝ պարսիկ կոմպոզիտոր ՓարվիզՄահմուդը նրան է ձոնել իր Ջութակի կոնցերտը: Նա և Է. Մելիք-Ասլանյանը ղեկավարել են համապատասխանաբար Թեհրանի կոնսերվատորիայի ջութակի և դաշնամուրի կատարողական դասարանները: Մելիք-Ասլանյանի բազմաթիվ մեծակտավ երկերից(բալետ, օրատորիա, սիմֆոնիկ և գործիքային ստեղծագործություններ ու կոնցերտներ) արժանահիշատակ է նրա հեղինակած «Գոլբանգ» (թարգմանաբար՝ «Սոխակի դայլայլ» կամ «Քաղցրահնչյուն երգ»)պատմահերոսական վոկալ-սիմֆոնիկ պոեմը (1967 թ.)՝գրված Թեհրանի օպերային թատրոնի բացման կապակցությամբ:

Է. Մելիք-Ասլանյանը ստեղծագործական կյանքի բոլոր շրջաններում ուսումնասիրել է Ձեն-բուդդիզմի դրույթներն ու գաղափարները և դրանցով առաջնորդվել իրդաշնամուրային կատարողականության նորարարական տեսությունում:

Իրենց գիտալուսավորչական, երաժշտահասարակական, կատարողական և ստեղծագործական գործունեությամբ ճանաչված են եղել նաև Ժորա Մինասյանը, Հրանտ Բեկլարյանը, Ալֆրեդ Մարդոյանը, Ավետիս Ջամբազյանը, որոնք Ռ. Գրիգորյանի և Է. Մելիք-Ասլանյանի հետ XX դարի կեսերից շարունակելով իրենց նախորդների ստեղծագործական ձեռնարկումները պրոֆեսիոնալ արվեստի տարբեր ոլորտներում, միջազգային հարթակներ են դուրս բերել ինչպես իրանահայ, այնպես էլ իրանական երաժշտության ձեռքբերումները՝ այս ասպարեզում ևս լինելով առաջատարների շարքերում:

Բոլոր իրանահայ արվեստագետների համար հայ արվեստին ծառայելու ձգտումը ստեղծագործական ուղեցույց է եղել: Այդ ուղենիշ գաղափարով են լուսավորվել նրանց ստեղծագործական ինքնության որոնումները, դրանով է իմաստավորվում նրանց ժառանգության ուսումնասիրության և գնահատման անհրաժեշտությունը Հայրենիքում:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
## «Լյուդվիգ Բազիլ (1931-1990)»

Լյուդվիգ Բազիլիարվեստնառանձնանում է յուրօրինակ ժամանակակից մտածողությամբ: Նրաերկերին ընդհանուր առմամբ բնորոշ է XX դարի

ավանգարդի ստեղծագործական սկզբունքներիու հայկական ազգային երգի երաժշտաարտահայտչական տարրերի համաժամանակյա կիրառման սկզբունքը, որպես՝ գրելաոճի հենք: Հայ երաժշտարվեստի և եվրոպական դասական երաժշտության լուրջ ուսումնասիրության արդյունքում ձևավորված նա մտածողության լակոնիզմը, թափանցիկ հյուսվածքներն ու կառույցները, որոնցով նա արտահայտում է իր խոհերն ու հույզերը, հարում են կոմիտասյան սկզբունքներին:

Լ. Բազիլը (Բարսեղյանը) սերում էր ազնվական հոգևորական տոհմից, որն Իրանում հաստատվել էր XVII դարասկզբի հայերի բռնագաղթի ժամանակ: Թեհրանի կոնսերվատորիան ավարտելոց հետո մեկնել է Հռոմ և 1954-ին ավարտել ջութակի, ապա կամերային և հոգևոր երաժշտության դասարանները: 1959 թ.-ին վերադառնում էԹեհրան և ստանձնում «Արարատ» մշակութային միության երգչախմբի ղեկավարությունը, 1961-ին հիմնում է «Հայ երգ» երիտասարդական երաժշտական ընկերությունը և հանդես գալիս համերգներով[24]:

Լ. Բազիլն այդ տարիներին զուգահեռաբար ղեկավարելէ Թեհրանի օպերային երգչախումբն ու վարել կոնսերվատորիայի ջութակի դասարանը: Առավել նպաստավոր ստեղծագործական միջավայր փնտրելու նպատակով 1964-ին Բազիլն այնուամենայնիվ մեկնել է Թեհրանից, հաստատվել Մյունխենում և շարունակել իր ակտիվ գործունեությունը:

Լ. Բազիլի ստեղծագործությունն ընդգրկում է շուրջ չորս տասնյակ կամերային-գործիքային, վոկալ-կամերային, խմբերգային երկեր: Մինչև 1976 թվականը գրված երկերն ամփոփված են «Արարատ» ժողովածուում[25]. դրանք են՝ Սայաթ-Նովայի, Կոմիտասի, Գ. Նարեկացու երգերի և տաղերի մշակումները, Դ. Վարուժանի բանաստեղծություններով երգաշարը, Սիամանթոյի խոսքերով գրված «Ծարաւ» երգը՝ բոլորը ձայնի և լարային քառյակի համար: Ժողովածուն ընդգրկում է նաև հեղինակի 3 լարային կվարտետները և Գ. Նարեկացու «Մատյան Ողբերգության» մասերից մեկի հիման վրա ստեղծված խմբերգը:

Նրա երգերում ակնհայտ է երաժշտական լեզվաոճի ընդգծված ձգտումը դեպի ժամանակակից, ոչ տոնայնական մտածողություն՝ ցրված դիսոնանս ակորդների և ազգային մելոսի տարրերի համադրությամբ: Լեզվամեղեդային այդօրինակ համադրությունը՝ ամփոփված սեղմ ծավալների և լողացող ձևերի մեջ՝ հեղինակի հատկանշական ստեղծագործական սկզբունքներից է:

Հետաքրքիր նկարազարդումներով են հրատարակված Լ. Բազիլի երկերի հատորյակները: Գրաֆիկական պատկերները՝ կոմպոզիտորի անվանատառերն ակնարկող ուրվագծերով և սև ու սպիտակ գունավորումով, որոշակի

---

[24]Կոմպոզիտորի կենսագրությանն առնչվող որոշ տեղեկատվական տվյալներ վերցված են Թեհրանի «Արարատ» միության արխիվներում պահվող նյութերից, որոնք բովանդակում են մամուլում լույս տեսած հոդվածներ, համերգային հայտագրեր, հարցազրույցներ և այլն:

[25]Ararat, poem, music, painting, Milano, 1977.

տրամադրություն են ստեղծում, և մտազուգորդվում Վ. Կանդինսկու աբստրակցիոնիստական գրաֆիկաների[26] ու Կ. Մալևիչի սուպրեմատիստական արվեստի հետ[27]: Հստակ ձևեր և գունային գամմա չպարունակող նկարները լիովին համահունչ են Լ. Բազիլի փոքրակտավ և դասական ձևակառուցման օրենքները խախտող երկերին:

Լ. Բազիլի երաժշտական ժառանգության կարևոր մասն են կազմում 3 լարային Կվարտետները: 1967-ին ազգային ճարտարապետական կոթողների չարաբախտ ճակատագրով ազդված նա գրում է «Անիի լքված եկեղեցիները» լարային կվարտետը, որը բազմիցս հնչել է Գերմանիայի քաղաքներում, այնուհետև «Վարդավառին» (1971 թ.) և 3-րդ Կվարտետը (1976 թ., չունի ծրագրային անվանում): Զուսպ արտահայտչամիջոցները, պոլիֆոնիկ հյուսվածքներն ու թափանցիկ ֆակտուրաները՝ որպես հեղինակային մտածողության հիմնական դրսևորում, առկա են նաև Կվարտետներում:

Կոմպոզիտորի ստեղծագործության վերջին շրջանը ներկայացնում են խմբերգերն ու խմբերգային մշակումները: Բացի 1976-ին՝ Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագրքի երկու աղոթքի հիման վրա գրված խմբերգից՝ ընդգրկված«Արարատ» ժողովածուում, առանձին հատորներով, 1980-1990-ականներինլույս են տեսել տասնյակ այլ խմբերգեր[28]:Դրանք ներառում են հայ միջնադարյան հեղինակների շարականների մշակումներ, որոնցում են«Սաղմոս»՝ ըստ անհայտ հեղինակի, «Այսօր կանգնեցաւ» և «Այս խորհուրդ լցաւ»՝ ըստ Ս. Պարթևի, «Սիրտ իմ սասանի» և «Աստուածն ամէնի»՝ ըստ Մ. Այրիվանեցու, «Այսօր անճառ»՝ ըստ Ն. Շնորհալու(I հ.), 4 երգ՝ Վահագն Դավթյանի տեքստերով(II հ.)և «Շարական»՝ Մ. Խորենացու շարականների հիման վրա(III հ.): Բոլոր թվարկված երկերը գրված են քառաձայն երգչախմբի համար:

Անհրաժեշտ է կարևորել նաև Բազիլի երաժշտաքննադատական հրապարակումները՝ նվիրված հայ երաժշտության զանազան խնդիրներին, Կոմիտաս Վարդապետի երաժշտական ժառանգությանը և այլն[29]:

Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ Լյուդվիգ Բազիլը գործուն մասնակցություն է բերել Իրանիերաժշտահասարակական ու համերգային

---

[26] Տե՛ս Կանդինսկի Վ., Հոգևորն արվեստում, Էսսեներ, Գրաֆիկաների շարք, Երևան, 2000:

[27]Տե՛ս Малевич К., Великие художники, том 85, Супремусы,Москва, 2011:

[28] Լյուդվիգ Բազիլ, «Հայ դասական երաժշտություն 1», Վենետիկ, 1980, «Արդի Հայ երաժշտություն 1» Միլան, 1989, «Արդի Հայ երաժշտություն 7», Միլան, 1991: Ժողովածուներում ամփոփված խմբերգերի ստեղծման ստույգ տարեթվերն առայժմ մեզ հայտնի չեն:

[29] Բազիլ Լ., «Ինչո՞ւ հայ երաժշտութիւնը իր բանաստեղծութեամբ չի արտահայտւում», La Struttura Negata: Cultura Armena Nella Diaspora, 1, Italy, Venezia, 1979, pp.83-87: Նույնի «Հայ «կրթուածների» բթամտութիւնը», La Struttura Negata: Cultura Armena Nella Diaspora, 2, Italy, Venezia, 1981, pp.105-108:

կյանքի ընթացքին, մեծ դեր խաղացել Իրանում կատարողական արվեստի զարգացման ոլորտում: Նրա ստեղծագործական ժառանգությունը հիմնականում քննելի է հայ երաժշտարվեստի համատեքստում: Իր անսովոր մտահղացումներով նա հայ երաժշտարվեստ ներմուծեց յուրատեսակ մտածողություն և որակ: Ժողովրդական, աշուղական և հոգևոր երգերի մշակումներում և դրանց արտահայտչական տարրերով հագեցած սեփական արարումներում կոմպոզիտորն ասես ներկայացնում է ազգային երաժշտության «պատմությունը»՝ նոր, աբստրակտ ոճով, անխաթար պահպանելով երաժշտական սկզբնաղբյուրները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրանահայ գաղթօջախի նշանակությունը և դերը Իրանում չի պարփակվում էթնիկ փոքրամասնության գոյապահպանման, ազգային խնդիրների առաջադրման ու լուծման և գործուն մշակութային կյանքի շրջանակներում: Փաստացի նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ XX դարասկզբին դասական երաժշտության մուտքը Իրան մեծապես պայմանավորված է նաև հայ արվեստագետներիգործունեությամբ: Իրանահայ կոմպոզիտորների բազմաժանր ստեղծագործություններն ու բազմակողմանի գործունեությունը էապես նպաստել են Իրանի պրոֆեսիոնալ երաժշտարվեստի ձևավորմանը, զարգացմանն ու ժանրային հորիզոնների ընդլայնմանը: Կարելի է ասել, որ Իրանի կոմպոզիտորական արվեստի պատմության ընթացքն ուղղակիորեն կապվում է իրանահայ երաժիշտների գործունեությանը, հետևաբար նշված ժամանակափուլում իրանահայերի երաժշտահասարակական ու լուսավորչական գործունեությամբ ձևավորված կոմպոզիտորական դպրոցի նշանակությունը դուրս է գալիս հայ երաժշտության սահմաններից և կարևորվում ընդհանրապես Իրանի պրոֆեսիոնալ երաժշտարվեստի շրջանակներում. դպրոց, որի ձևավորման ակունքները բխում էին հայկական, եվրոպական և իրանական երաժշտարվեստների կենսատու ավանդույթներից:

Հայ կոմպոզիտորների համար մեծ է եղել «ազգայինի» դերը՝ արտահայտված նրանց երկերում, մշակումներում ու փոխադրություններում լայնորեն կիրառված ժողովրդական, հոգևոր և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտությանը բնորոշ ելևէջային, ձայնակարգային ու ռիթմամեղեդային մտածողության սկզբունքներում:

Հայ երաժիշտները նույնքան բեղմնավոր և որոշիչ դեր են ունեցել կատարողական արվեստի զարգացման ասպարեզում. մասնավորապես նկատի ունենք ջութակի (Ռ. Գրիգորյան) և դաշնամուրի (Է. Մելիք-Ասլանյանը) կատարողական դպրոցների հիմնադրումը և աննախադեպ վերելքը XX դարի կեսերին:

Ռուբեն Գրիգորյանի, Էմմանուել Մելիք-Ասլանյանի, Հրանտ Բեկլարյանի,

Ալֆրեդ Մարդոյանի, Լյուդվիգ Բազիլի, Ավետիս Ջամբազյանի և շատ ուրիշ արվեստագետների ստեղծագործական մտահղացումները նորույթ էին Իրանում և վկայում էին հայ կոմպոզիտորների հետաքրքրությունների լայն շրջանակը, մասնագիտական հմտությունները և ժամանակի առաջատար հոսանքներին արձագանքելու միտումը:

Նման եզրակացության է հանգեցնում նաև հայ երաժշտների գործունեության ուսումնասիրությունը հայկական և իրանական ժողովրդական երաժշտության ոլորտում: Հարուստ և բազմազգ երաժշտական ավանդույթներ ունեցող Իրանի ժողովրդական երգարվեստի նմուշների գրառմանև մշակման ասպարեզում մեծ է հայ արվեստագետների դերը, որոնց համար Կոմիտասի գործը լուսավոր փարոս է եղել: Հայկական և իրանական ժողովրդական երգաստեղծության հնագույն նմուշները տարաբնույթ ժանրային մարմնավորումներ են ստացել հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային երկերում: Ն. Գալանդերյանի, Ա. Պատմագրյանի, Ռ. Գրիգորյանի, Ա. Մարդոյանի և այլոց ջանքերով իրանական երգը ներդաշնակվել, բազմաձայնվել և բեմական կյանք է ստացել:

Աշխատանքում ընդգրկված նյութը վկայում է նաև, որ իրանահայ կոմպոզիտորների ստեղծագործություններում յուրովի արտահայտություն են ստացել նաև Պատմական Հայաստանի տարբեր գավառների, մասնավորապես Ակնի, Վանի, Զմշկածագի երաժշտական բանահյուսության ավանդույթները: Բանավոր արվեստով պահպանված և սերնդե սերունդ փոխանցված, թեպետև փոքրաթիվ երգերին առնչվող տվյալները և դրանց հեղինակային մարմնավորումները տարբեր կոմպոզիտորների ստեղծագործության մեջ, անկասկած արժեքավոր նյութ են և համալրում են մեր պատկերացումները հատկապես Ակնի երբեմնի հարուստ երաժշտարվեստի վերաբերյալ: Այսպիսով, իրանահայ արվեստագետների ստեղծագործությունը կարևորվում է նաև Պատմական Հայրենիքի երաժշտական ավանդույթների շարունակական ընթացքի դրսևորման տեսանկյունից: Մյուս կողմից իրանահայ (և ընդհանրապես սփյուռքահայ) արվեստագետները ստեղծագործաբար կիրառելով հայրենական երաժշտական մշակույթի ավանդույթները յուրովի նպաստել են ազգային ինքնագիտակցության և երաժշտական ինքնության պահպանմանը:

XX դարի կեսերից պրոֆեսիոնալ երաժշտության զարգացմանը մեծ ազդակներ հաղորդած Ն. Գալանդերյանը, Ռ. Գրիգորյանը, Է. Մելիք-Ասլանյանը, Ա. Մարդոյանը, Լ. Բազիլը, Ա. Ջամբազյանը և այլք Իրանի դասական երաժշտարվեստի պատմության մեջ կարևորվում են սիմֆոնիկ, կամերային գործիքային, վոկալ, օպերային ժանրերի հիմնադիր կոմպոզիտորների և կատարողների շարքում:

Աշխատանքում ընդգրկված ստեղծագործությունների քննությունը՝ միտված հայ հեղինակների երկերում արտահայտված նորարարական սկզբունքների և գրելաձևերի լուսաբանմանը, թույլ է տալիս եզրակացնել.հետևելով եվրոպական

ժամանակակից երաժշտության ընդհանուր միտումներին ու հոսանքներին, իրանահայ կոմպոզիտորները՝ մասնավորապես երկրորդ սերնդի ներկայացուցիչները, պահպանել ու շարունակել են ազգային երաժշտարվեստի լեզվաոճական, ձայնակարգային ու ելևէջային առանձնահատկությունները ստեղծագործաբար կիրառելու ավանդույթը: Ավելին, հայ և իրանական երաժշտության ինքնատիպ համադրումները առանձնահատուկ հնչողություն են հաղորդել նրանց ստեղծագործությանը և բարձր գնահատվել համաշխարհային երաժշտարվեստի համատեքստում: Մեզ մատչելի նյութերի և աղբյուրների քննությամբ կարող ենք հավաստել. XX դարասկզբին իրանահայ համայնքի արվեստագետների գործունեությունը գնահատելի է թե՛ որպես հայ երաժշտական մշակույթի արտահայտություն՝ իր պատմամշակութային ավանդույթների ձևավորման առանձնահատուկ բնույթով ու ստեղծագործական ուղղվածությամբ, և թե՛ որպես իրանահայ արվեստագետների գործունեություն՝ միտված Իրանում պրոֆեսիոնալ երաժշտարվեստի ավանդույթների կայացմանն ու ստեղծագործական զարգացմանը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ


**1.** Այվազյան Շ., Նիկոլ Գալանդերյանի երգերի լեզվաոճական բնութագիրը // Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջանի նյութերի ժողովածու, «Գիտություն», Երևան, 2014, էջ 180-186

**2.** Այվազյան Շ., Հայ երաժիշտների դերը Իրանի երաժշտական մշակույթի ձևավորման գործում // Երաժշտական Հայաստան 1(48)2015, «ԵՊԿ հրատարակչություն», Երևան, էջ 70-74

**3.** Այվազյան Շ., Հայ կոմպոզիտորներն Իրանի երաժշտական մշակույթի համատեքստում // Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանի նյութերի ժողովածու, «Գիտություն», Երևան, 2016, էջ 214-220

**4.** Այվազյան Շ., Իրանահայ կոմպոզիտորական արվեստ. Լյուդվիգ Բազիլ (1931-1990) // Կանթեղ գիտական հոդվածներ 1 (66), «Ասողիկ», Երևան, 2016, էջ 210-218

**5.** Այվազյան Շ., Ն. Գալանդերյանի ստեղծագործական ժառանգությունը // Երաժշտական Հայաստան, 1(50)2016, «ԵՊԿ հրատարակչություն», Երևան, էջ 72-76

**6.** Այվազյան Շ., Հայ արվեստագետները Իրանում // Կանթեղ գիտական հոդվածներ 3 (68), «Ասողիկ», Երևան, 2016, էջ 171-178

## ШУШАН АЙВАЗЯН
## ТВОРЧЕСТВО ИРАНО-АРМЯНСКИХ КОМПОЗИТОРОВ XX ВЕКА
### (Резюме)

Ирано-армянская община, имеющая богатые историко-культурные традиции, играла важную роль в развитии культуры Ирана, способствуя взаимовлиянию и взаимообогащению культур двух народов. Началом своего формирования и в силу исторических обстоятельств она выделяется среди других общин армянской Диаспоры. Несмотря на то, что вековые культурные связи между двумя народами почти не прерывались, историко-политические и экономические обстоятельства постоянно диктуют новые подходы, выдвигают новые задачи. Беспрецедентное развитие культурной жизни ирано-армянской общины в конце XIX - начале XX века создало благоприятные условия для подъема и распространения профессиональной музыки как в армянской общине, так и в иранской среде в целом.

Ирано-армянская община со своими прошлыми и настоящими музыкально-культурными традициями не может быть охвачена в рамках одного исследования. Цель настоящей работы - в наиболее полном объеме представитьмногожанровое творчество ирано-армянских композиторов, их обширную музыкально-общественную деятельность - с освещением творческих биографий. Никол Галандерян, Эммануэл Мелик-Асланян, Аветис Джамбазян и др. составляют плеяду музыкантов, внесших большой вклад в музыкальную культуру Ирана.

Многие из них вследствие неблагоприятных условий, возникших после Иранской Исламской революции (1979 г.), покинули Иран, жили и творили в Армении, США и разных странах Европы.

Музыкально-общественная, творческая и исполнительская деятельность ирано-армянских композиторов не стала предметом комплексного исследования, и не достаточно изучена.

В диссертации впервые:

- Классифицировано и исследовано творческое наследие ирано-армянских композиторов в контексте соответствующих временных периодов, рассмотрены их наиболее значимые произведения, выявлены принципы соотношения национальных и общеевропейских компонентов.
- Отдельно представлены творческие портреты Н. Галандеряна и Л. Базиля - представителей разных поколений ирано-армянских композиторов.
- На основе доступного и опубликованного материала описано творческое наследие Никола Галандеряна, подчеркнуты особенности его мелодического мышления, проистекающего из разных жанровых сфер армянской монодии.
- При освещении творческой биографии Людвига Базиля дана оценка его произведениям, отличающимся непривычными новаторскими идеями.

- Оценен вклад армянских музыкантов в иранскую культуру с точки зрения установления исполнительских и творческих критериев классической музыки, развития различных жанров профессиональной музыки в Иране, обработки народных песен и их использования в композиторском творчестве.

Всестороннее исследование архивных материалов, нововыявленных фактов, изданных и неопубликованных произведений позволяет заключить, что роль и значение ирано-армянской колонии в Иране не ограничивается рамками общины.

Армянским профессиональным музыкантам приписывается почетная инициатива осуществления первых оперных спектаклей в Иране, создания первого симфонического оркестра, струнного квартета, первых учебников, разработка методики преподавания игры на скрипке и фортепиано. Они принимали активное участие в работах по основанию в разных городах Ирана музыкальных школ и консерватории. Им принадлежит также первая многоголосная и оркестровая обработка национального гимна Ирана.

В то же время, для армянских композиторов была важна роль "национального", выраженного в широком использовании в их сочинениях ладо-интонационных, ритмико-мелодических особенностей, характерных для народной, духовной и народно-профессиональной музыки. Собранный в работе материал свидетельствует также о том, что в произведениях ирано-армянских композиторов нашли своеобразное отражение элементы музыкального фольклора разных провинций Исторической Армении (в частности, Акна, Вана, Чмшкацака). Творчески используя традиции отечественной музыкальной культуры, они по-своему способствовали сохранению национального самосознания и музыкальной идентичности. Малочисленные песни, сохранившиеся в устной традиции и передаваемые из поколения в поколение, и их креативные воплощения в произведениях разных композиторов, несомненно, являются ценным материалом, дополняют наши представления, особенно о некогда богатом музыкальном фольклоре Акна. Светлым маяком для них было дело Комитаса. Усилиями Н. Галандеряна, А. Патмагряна, Р. Григоряна, А. Мардояна и др. иранская народная песня получила многоголосное звучание и сценическую жизнь.

Исследовав доступный нам материал и источники, можем сделать следующее обобщение: деятельность композиторов ирано-армянской общины XX века значима и как выражение армянской музыкальной культуры – со своеобразным характером формирования ее историко-культурных традиций и творческих направлений – и как деятельность, направленная на становление и творческое развитие в Иране традиций профессионального музыкального искусства.

## SHUSHAN AYVAZYAN
## THE WORK OF IRANIAN-ARMENIAN COMPOSERS IN THE XX CENTURY
### (Summary)

Rich in historical-cultural traditions, the Armenian community in Iran has played an important role in the development of Iranian culture, greatly enhancing the enrichment of the culture of both nations. Due to its very origin as well as the historical circumstances, the community has secured its unique place in the Armenian Diaspora. Even though the cultural relations between the two countries have almost never been disrupted throughout the centuries, historical-political and economic circumstances have necessitated new approaches and challenges. The end of the 19th century and the beginning of the 20th century witnessed unprecedented progress in the community's cultural life, thus promoting the spreadof professional music not only within the Armenian community but also expanded to embrace the cultural atmosphere of the country in general.

The past and present of theart music of the Iranian Armenian community cannot be exhaustively addressed within the framework of one research. The aim of this research is to study the multi-genre works by Iranian-Armenain composers and the wide scope of their musical-social activity in the light of their biography.Among the composers marked by their great contribution to the art music of Iran are Nikol Galanderyan, Emmanuel Melik-Aslanyan, Levon and Ruben Grigoryan, Hrant Beklaryan, Lyudvig Bazil, Avetis Jambazyan. Beacause of the unfavourable conditions in the wake of Iranian Islamic revolution in 1979 many of them left Iran to live and work in Armenia, US and different countries of Europe.

The musical-creative activity of Iranian Armenian composers has not so far been a matter of special study and has never been sufficiently researched in musicology.

This dissertation is the first research in which:

- The creative legacy of Iranian Armenian composers has been classified and studied in the context of respective time periods; the most significant works have been examined in the light of Armenian music as well as Iranian professional art music.
- The creative portraits of N.Galanderyan and L. Basil, representatives of different generations of composers, have been examined in two different chapters.
- Nicol Galanderyan's creative legacy has been outlined on the basis of both published and unpublished materials available to us, with special focus on the peculiarities of his melodic thinking based on different genres of Armenian music.

In highlighting Ludvig Basel's creative biography special emphasis has been laid on the value of his innovative and unusual work. Through the analysis of his works belonging to different genres the characteristic features of his abstract synthetic style developed in his arrangements of folk, ashough and spiritual songs have been revealed.

- The contribution of the Armenian musicians to Iranian culture has been examined from the standpoints of definition of performative and compositional standards,development of different genres of classical art music in Iran, the elaboration of folk songs and their use in composers' works.

The comprehensive examination of archival materials, the newly-discovered facts, the published and unpublished works makes it possible to conclude that the importance of the compositional school formed as a result of social-musical and enlightening activities of IranianArmenians goes beyond the borders of the community and is valued within the context of professional music of Iran in general.

The Armenian professional musicians initiated different projects in different fields, including the staging of the first operatic works, formation of the first symphonic orchestras and multi-voiced choirs, the foundation of a string quartet, translation of the first study books, development of innovative theories contributing to the violin and piano performing traditions. They were also actively involved in the process of the foundation of the conservatory as well as music schools in several towns of Iran. They also authored the first multi-voiced and orchestral arrangements of the national anthem of Iran.

The roots of the works by Iranian Armenian composers can be traced back to both Iranian, Armenian and European music traditions. At the same time, Iranian Armenian composers gave great value to the 'national' element, which was expressed in the modal, melodic and rhythmic principles typical of folk, spiritual and folk-professional music widely used in their works and arrangements. The material in the dissertation shows that the Iranian Armenian composers also used the unique elements found in folk music of different provinces of historical Armenia (Akn, Van, Chmshkatsag).

The creative usage of the art music traditions by Iranian Armenian composers has been conducive to securing national consciousness and musical identity. The few number of songs that have been orally handed down from generation to generation, as well as their usage by the composers are undoubtedly very valuable materials, enriching our ideas of abundant musical heritage, particularly that of Akn.

Inspired by Komitas, the Armenian composers have also played an important role in recording, arranging and performing Iranian folk songs.

The ancient samples of Armenian and Iranian folk songs have found different genre expressions in the symphonic and chamber works. It is through the efforts of N. Galanderyan, A. Patmagryan, R. Grigoryan, A. Mardoyan and others that the Iranian song art has been harmonized, polyphonically arranged and performed on the stage.

Based on the examination of the available materials and sources it can be concluded; the creative activity of the XX century Iranian Armenian composers is valuable both in terms of Armenian musical culture for the characteristic nature and creative tendency of the development of its historical traditions and in terms of the

professional activity of Armenian composers directed toward the establishment and progress of professional music of Iran.